6.3 Գույքով (այդ թվում՝ առարկայազուրկ ոսկով, դրամական միջոցներով) ապահովված Վարկային քարտ Master Card Gold/VISA Gold քարտատեսակներով

Նպատակ	Նպատակ	Վճարումների իրականացում		
Հաճախորդի անձնական տվյալներ	Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք	18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվում է համավարկառուի/երաշխավորի առկայությամբ, այս դեպքում որպես ընդունելի տարիք նույնպես ընդունվում է 18-65 տարեկանը, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը: Եթե վարկի պայմաններով սահմանված է պարտադիր համավարկառուի կամ երաշխավորության պահանջ (բացառությամբ OTI ցուցանիշի հաշվարկում ներառված եկամուտների առնվազն 70% տիրապետող անձանց համավարկառության կամ երաշխավորությունների), ապա ֆիզիկական անձ երաշխավորի կամ համավարկառուի համար որպես ընդունելի տարիք նույնպես սահմանվում է 18-65 տարեկան, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը:		
	Ռեզիդենտություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք		
Վճարունակության գնահատում*	Ընդհանուր վարկային պարտավորությունների հարաբերակցություն ընդհանուր եկամուտին (OTI)	Մինչև 400,000 ՀՀ դրամ եկամուտի առկայության դեպքում	400,000-800,000 ՀՀ դրամ եկամուտի առկայության դեպքում	800,000 ՀՀ դրամից ավել եկամուտի առկայության դեպքում
		50%	55%	60%
	Ընդհանուր եկամուտների և պարտավորությունների տարբերություն (OSM)	ք. Երևանում ≥ 70,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում ≥ 45,000 ՀՀ դրամ	ք. Երևանում ≥ 90,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում ≥ 70,000 ՀՀ դրամ	ք. Երևանում ≥120,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում ≥ 90,000 ՀՀ դրամ
Վարկային քարտի պայմաններ	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	Քարտի սպասարկման վճար	2,000 ՀՀ դրամ ամսական / 20,000 ՀՀ դրամ տարեկան **(AYO քարտի դեպքում գործում են այլ սակագներ՝ համաձայն «Վարկային գծով AYO քարտերի սակագների»)**		
	Քարտային փաթեթի սպասարկման վճար	**1,500 ՀՀ դրամ ամսական / 15,000 ՀՀ դրամ տարեկան** **(AYO քարտի դեպքում գործում են այլ սակագներ՝ համաձայն «Վարկային գծով AYO քարտերի սակագների»)**		
	Քարտի նվազագույն և առավելագույն վարկային սահմանաչափ**	1,500,000-5,000,000 ՀՀ դրամ	5,000-15,000 ԱՄՆ դոլար	5,000-15,000 Եվրո
	Քարտի վարկային սահմանաչափի ավելացում	5,000 ՀՀ դրամ		
	Ժամկետ (ամիս)	Անժամկետ ցպահանջ* Մինչև Բանկի կողմից վարկի հետկանչումը, որն իրականացվում է Պայմանանագրով սահմանված կարգով և պայմաններով Բանկի կողմից պարբերաբար իրականացվող մոնիթորինգի արդյունքերի հիման վրա:		
	Տոկոսադրույք	**16.5%**	**13.5%**	**11.5%**
	Փաստացի տոկոսադրույք***	16.68-19%	13.27-18.15%	11.05-15.35%
		Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադիրների չափով՝ • Ավտոտրասպորտային միջոց 2.5 • Հիմնական միջոց 0.5 Անշարժ գույքի ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը նվազեցվում է 0.05%՝ հաշվի առնելով ընդհանուր գրավային ապահովման մեջ յուրաքանչյուր գույքի տեսակի տեսակարար կշիռը:		

		Վարկի մարումների դիֆերենցված և խառը եղանակն ընտրելիս տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:
		Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ապահովվածության (վարկ/գրավ) ցուցանիշի շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:
		Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից (հայտարարագրված եկամտի գծով սահմանված չափանիշների, OTI և OSM ցուցանիշներից որևէ մեկի կամ դրանց ցանկացած համադրության) շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:
		Այլ շեղումների դեպքում կարող է կիրառվել ավելի բարձր տոկոսադրույք +0.25%:
		Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է. - վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում՝ գործող դրամական միջոցներ/պարտատոմսի տոկոսադրույք + 4%,
		Վարի գումարը 15մլն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում Հաճախորդի կողմից առանց վարկի վաղաժամկետ մարման վճարի տարբերակ նախընտրելիս վարկի տոկոսադրույքը սահմանվում է +2% (կիրառելի չէ դրամական միջոցի/պարտատոմսերի գրավով ապահովված վարկերի դեպքում):
	Վճարման արտոնյալ ժամկետ	Մինչև 51 օր
գծի մարման եղանակներ	Պարտադիր վճարման ենթակա գումար	Քաղվածքում արտացոլված օգտագործված գումարի 10%, ոչ պակաս 5,000 ՀՀ դրամ, 10 ԱՄՆ դոլար, 10 եվրո և կուտակված տոկոսագումար * կիրառելի չէ դրամական միջոցի գրավով կամ պարտատոմսերով ապահովված կամ Premium և Partner հաճախորդներին տրամադրված վարկային քարտերի դեպքում
		Մեկ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները վճարման արտոնյալ ժամկետում ամբողջությամբ մարելու դեպքում օգտագործված գումարների վրա տոկոս չի հաշվարկվում

Վարկային 6	Տոկոսների հաշվարկում	Չմարելու դեպքում օգտագործված գումարների վրա օգտագործման առաջին իսկ օրվանից հաշվարկվում է տոկոս, որը հաշվարկվում է նաև հետագայում Օգտագործվող/ված գումարների նկատմամբ, որը ենթակա է մարման ամսական պարբերականությամբ:
Ապահովվածություն	Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք, տրանսպորտային միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
	Վարկ/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ*** (անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի և հիմնական միջոցի դեպքում որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը)	Վարկի ապահովություն հանդիսացող գրավի առարկաների արժեքը ներառվում է վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկում հետևյալ առավելագույն սահմանաչափերով ըստ յուրաքանչյուր գրավատեսակի. 1. անշարժ գույք. Երևանում գտնվող գույքի համար՝ 70%, Երևանից դուրս գտնվող գույքի համար՝ 60% 2. տրանսպորտային միջոց՝ 60% 3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը 4. ոսկու առարկայազուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80% 5. դրամական միջոց Ամերիաբանկում/ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից. -նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 90% -այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 70%
	Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը	ՀՀ և ԼՂՀ մայրաքաղաքներ և մարզկենտրոններ, ինչպես նաև Աբովյան, Էջմիածին, Ջրվեժ, Առինջ, Զորաղբյուր, Ծաղկաձոր, Դիլիջան, Քաջարան և Ջերմուկ քաղաքներ
	Գրավադրվող տրանսպորտային միջոցի տարեթիվը	Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝ բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային
	Գրավադրվող գույքի գնահատում	Գրավադրվող անշարժ գույքը գնահատվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից:
		Գրավադրվող Տրանսպորտային միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից:
	Լրացուցիչ ապահովում	Որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն
Գրավադրվող գույքի ապահովագրություն	Գրավադրվող գույքի ապահովագրություն	Գրավադրվող անշարժ գույքի, տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունը իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի սահմանաչափի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի սահմանաչափի չափով Բանկի կողմից ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնացող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր: • Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձնեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ • Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ
Վարկային փաստաթղթեր	Պահանջվող փաստաթղթեր	Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր.
		• Վարկի հայտ-դիմում
		• Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակը)
		• Ձեռք բերվող/գրավադրվող գույքի սեփականության վկայականի պատճեն
		Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.
		• Տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ և/կամ եկամուտը հավաստող այլ փաստաթղթեր
		• Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան), ծննդյան վկայական (բնօրինակները)
		• Գրավադրվող տրանսպորտային միջոցի հաշվառման/գրանցման վկայագիր և սեփականության վկայական (բնօրինակները)
		• Գրավադրվող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի բնօրինակը
		• Գրավադրվող հողատարածքի գեոդեզիական չափագրումը*****
		•Նախնական Հաշվետվություն՝ անշարժ գույքի/ տրանսպորտային միջոցի գնահատման վերաբերյալ
		Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր.

Դահանջ		• Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերի պատճենները, ներկայացվում են ըստ պահանջի
		• Ձեռք բերվող/գրավադրվող գույքի սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը (բնօրինակները)
		• Գրավադրվող գույքի սեփականատերերի Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան) վկայականի պատճենը
		• Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեից՝ գույքի պարտավորություններով ծանրաբեռնվածության վերաբերյալ (Միասնական տեղեկանք)
		•Տեղեկանք Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ
		•Հիմնական Հաշվետվություն՝ անշարժ գույքի գնահատման վերաբերյալ
		• Անշարժ գույքի/Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր
		• Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով
Ենթակա է ըստ ցանցային գումարների	Վարկի վաղաժամկետ մարման վճար	Վարկի ժամկետի առաջին 3 տարվա ընթացքում Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վճարվում է ժամկետից շուտ վճարած գումարի 5%-ը,որը կիրառելի է 15մլն ՀՀ դրամը գերազանցող վարկերի սահմանաչափի ժամկետից շուտ ամբողջական փակման դեպքում (կիրառելի չէ դրամական միջոցի/պարտատոմսերի գրավով ապահովված վարկերի դեպքում):
	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

Վճարումներ	Միանվագ վճար՝ ամսական նվազագույն մարման գումարը ժամանակին չվճարելու համար*****	5,000 ՀՀ դրամ
Այլ պայմաններ	Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	• ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, • Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի/տրանսպորտային միջոցի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական իրավասու մարմնում գրանցման վճար • Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ Տեղեկանքի վճար

* OTI գործակիցը հաշվարկվում է Վարկառուի, Համավարկառուի և ընտանիքի անդամների բոլոր վարկային պարտավորությունները հարաբերելով հաշվարկվող ընդհանուր զուտ եկամուտին:

OTI ցուցանիշի հաշվարկում ընդգրկվում է.
-Վարկառուի զուտ եկամուտը, կամ
-Վարկառուի, Համավարկառուի զուտ եկամուտը, կամ
-Վարկառուի, Համավարկառուի և վարկառուի/համավարկառուի ընտանիքի անդամների զուտ եկամուտը:

OSM գործակիցը հաշվարկվում է OTI ցուցանիշի հաշվարկում ներառված եկամուտների և վարկային պարտավորությունների տարբերությունից հանելով վարկառուի/համավարկառուի և ընտանիքի անդամների գծով հաշվարկվող ծախսերը:
Կախված եկամուտների մակարդակներից՝ ընտանիքի անդամների գծով ծախսը հաշվարկվում է համապատասխանաբար՝
1. Մինչև 400,000 ՀՀ դրամ եկամուտի առկայության դեպքում՝ յուրաքանչյուր անձի գծով ք. Երևանում՝ 70,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում՝ 45,000 ՀՀ դրամ:
2. 400,000-800,000 ՀՀ դրամ եկամուտի առկայության դեպքում՝ յուրաքանչյուր անձի գծով ք. Երևանում՝ 90,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում՝ 70,000 ՀՀ րամ:
3. 800,000 ՀՀ դրամից բարձր եկամուտի առկայության դեպքում՝ յուրաքանչյուր անձի գծով ք. Երևանում՝ 120,000 ՀՀ դրամ, ՀՀ մարզերում՝ 90,000 ՀՀ դրամ:
Ընդ որում OTI ցուցանիշի հաշվարկում ներառվող եկամուտների առնվազն 70% տիրապետող անձինք պետք է հանդիսանան կամ Համավարկառու կամ Երաշխավոր:

Պահանջվող վարկի գծով ամսական մարումները OTI/OSM գործակիցների հաշվարկում ընդգրկվում են ամսական մարվող գումարներից առավելագույնը:

Հաճախորդի գործող վարկային պարտավորությունները հաշվարկելիս Վարկային գծի և ոսկով ապահովված վարկերի դեպքում որպես ամսական պարտավորությունների գծով ծախս հաշվարկվում է ընդհանուր սահմանաչափի/վարկի մնացորդի 5%-ը:

Դրամական միջոցով և ոսկու առարկայազուրկ մետաղական հաշվով ապահովված վարկերի դեպքում վարկունակության ցուցանիշներ չեն հաշվարկվում, հետևաբար եկամուտը հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

**Հաճախորդի դիմումի համաձայն վարկային քարտի նվազագույն սահմանաչափը կարող է սահմանվել ավելի պակաս՝ պայմանով, որ հաճախորդի վարկունակությունը համապատասխանում է վերը նշված սահմանաչափերին:

***Փաստացի տոկոսադրույքի մեծությունը/արժեքը կարող է վերը նշվածից տարբերվել, եթե առկա են հետևյալ գործոնները կամ դրանցից որևէ մեկը.
-Հաճախորդի ցանկությամբ գույքի ապահովագրությունն Բանկի կողմից իրականացվելու դեպքում
-Վարկի մարումների դիֆերենցված կամ խառը եղանակն ընտրելու դեպքում
-Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից շեղման դեպքում
-Լրացուցիչ գույք գրավադրելու դեպքում
-Այլ շեղումների դեպքում

****Դրամական միջոցով ապահովված վարկերի դեպքում վարկ/դրամական միջոց հարաբերակցության մեջ դրամական միջոցի գումարը ներառվում է ժամկետի սկզբում վճարված տոկոսագումարը նվազեցնելուց հետո:

*****2015թ. հունվարից հետո կնքված վարկային քարտերի համար միանվագ գումարի փոխարեն գործելու են ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ գործող տույժերն և տուգանքները:
*****Գեոդեզիական չափագրումը պահանջվում է (բացառությամբ պարսպապատ և տնամերձ հողատարածքների), եթե.
- հաճախորդը դիմել է 50 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկի համար և
- հողատարածքի գրավի դիմաց հաշվարկվող վարկային սահմանաչափի մասնաբաժինը ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափում գերազանցում է 30%: Ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափ է համարվում ընդունելի վարկ/գրավ հարաբերակցության սահմաններում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ հաճախորդին հասանելի և տվյալ պահին տրամադրման ենթակա վարկային միջոցների հանրագումարը: